ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 326 - Ա

ՇՄԱՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ԱԶՆԻՎ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՐՆԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ «ԱՐԱՎՈՒՍԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 7-ի հարցազրույցի N 1 արձանագրությունը և Շ. Հայրապետյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. 2026 թվականի հուլիսի 13-ից Շմավոն Հայրապետյանին նշանակել «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. Շմավոն Հայրապետյանին 2026 թվականի հուլիսի 10-ից ազատել «Արավուսի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2024 թվականի հուլիսի 29-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագիրը:

09.07.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ Սյունիքի մարզպետին փոխարինող ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026թ. հուլիսի 9
Քաղաք Կապան